


Հարցաթերթ  
Աշխարհագրություն առարկայի օլիմպիադա  
դպրոցական փուլ – 2024-2025 ուս. տարի  
(տևողությունը – 90 րոպե)  
10 – րդ դասարան

**Ընտրովի պատասխանով առաջադրանքներ**

1. ՀՀ տարածքում ֆեռոնոլիթների ձուլման գործարանը գտնվում է՝  
1. Քաջարան      2. Կապան      3. Երևան      4. Ագարակ
2. Ռելիկտային ծառատեսակի պահպանության նպատակով ՀՀ տարածքում հիմնված բնության հատուկ պահպանվող տարածք է՝  
1. Խոսրովի անտառ արգելոցը      2. Շիկահողի արգելոցը  
3. Էրեբունու արգելոցը      4. Արփի լիճ ազգային պարկը
3. ՀՀ նշված լճերից որի՞ սառցածածկույթն է պահպանվում առավել երկար  
1. Արփի լճի ջրամբար      2. Այդր      3. Սևան      4. Քարի
4. Մանր եղջերավոր անասունների գլխաքանակով նշված երկրներից առաջատար է՝  
1. Ֆրանսիա      2. Մեծ Բրիտանիա      3. Գերմանիա      4. Ավստրիա
5. Նշված գետերից ամենաքիչ նավարկելին է՝  
1. Ամազոն      2. Նեղոս      3. Կոնգո      4. Միսիսիպի
6. Նշված աշխարհագրական լայնություններից որի՞ նկատմամբ է Արևի հորիզոնական բարձրությունը կեսօրին առավել մեծ հուլիսի 3-ին  
1. հս.լ. 20°      2. հս.լ. 21.5°      3. հս.լ. 22°      4. հս.լ. 23.5°
7. Հորիզոնական շարժվող մարմնի վրա Կորիոլիսի ուժն առավելագույն ազդեցությունն ունի՝  
1. հասարակածում      2. արևադարձում      3. բարեխառն գոտում      4. բևեռներում
8. Մերկատորի պրոյեկցիայով կազմված քարտեզում հս.լ. 30° զուգահեռականի և արլ. ե. 30° միջօրեականի հատումից ի՞նչ աստիճանի անկյուն է ձևավորվում  
1. 0      2. 30      3. 60      4. 90
9. Կաթոլիկների թվով աշխարհի առաջատար երկիրն է՝  
1. Բրազիլիա      2. ԱՄՆ      3. Ֆիլիպիններ      4. Իտալիա
10. Նշվածներից ո՞ր գուգահեռականի վրա է 1° աղեղի երկարությունը 55,8 կմ  
1. 60°      2. 45°      3. 30°      4. 0°
11. Նշված երևույթներից որո՞նց միջև գոյություն ունի դրական կոռելյացիա  
1. անտառածածկ մակերեսի և օդում փոշու պարունակության  
2. տեղանքի բացարձակ բարձրության և տեղումների քանակի  
3. ծովափից հեռավորության և բնակչության խտության  
4. կրթական ցենզի և աղքատության
12. Քարտեզի վրա կոր գծերի երկարությունը որոշելու համար կիրառվող գործիք է՝  
1. կուրվիմետր      2. անեմոմետր  
3. բարոմետր      4. հիգրոմետր
13. Երկրագնդի մակերևույթով անցնող և երկու կետերը միացնող ամենակարճ գիծը կոչվում է  
1. լոքսոդրոմ      2. օրթոդրոմ      3. իզոկոլ      4. օյկումենա
14. Ո՞ր մեգալոպոլիսի մաս է Լոս Անջելեսը՝  
1. Մանսան      2. Չիկիթս      3. Բոսվաշ      4. Տոկայո

15. Դիտարկելով Էլեկտրաէներգիայի արտադրության աղբյուրների դինամիկան 1985-2020թթ. նշե՛ք ո՞րն է բնական գազի բաժինը

1. Ա 2. Բ 3. Գ 4. Դ



**Կարճ պատասխանով առաջադրանքներ**

16. Ա երկրում բնակչության թիվը 2023թ.-ին 2022թ.-ի համեմատ ավելացել է 100հզ մարդով, ընդ որում բնակչության թիվը 2022թ.-ի վերջին եղել է 8մլն մարդ, իսկ 2023թ.-ին միգրացիայի մնացորդը՝ 60հզ մարդ: Որքա՞ն է եղել այդ նույն ժամանակահատվածում բնակչության բնական աճը՝ արտահայտած պրոմիլներով:

17. 2010թ.-ին կազմված տեղագրական քարտեզից պարզում ենք, որ Ա նպատակակետի ուղղության անկյունը 220° է, իսկ քարտեզի մագնիսական խոտորումը՝ արևմտյան՝ 1,5°: Ի՞նչ անկյամբ պետք է շարժվի զբոսաշրջիկը 2020թ.-ին, եթե կողմնորոշվում է ձեռքի կողմնացույցով, իսկ խոտորման տարեկան փոփոխությունն արևելյան է՝ 0,05°:

18. Գետի վրա նախատեսվում է կառուցել ՀԷԿ, որը դիմել է ջրօգտագործման թույլտվության՝ պահանջելով տարեկան տրամադրել 48մլն խմ ջուր գետից վերցնելու հնարավորություն: Նախատեսվող ջրառի տեղանքում չափումները ցույց են տալիս, որ գետի տարեկան (365 օր) միջին ծախսը 5խմ/վրկ է, սակայն գետի էկոլոգիական թողքը պետք է լինի տարեկան հոսքի 30%-ից ոչ պակաս: Թույլատրելիից քանի հազար խմ ավել է պահանջել ՀԷԿ-ի սեփականատերը:

19. Տրանսպորտային ուղեգծի երկարությունը մեկ ուղղությամբ 25կմ է: Տրանսպորտային միջոցների շարժման միջին արագությունը՝ 40կմ/ժամ: Քանի տրանսպորտային միջոց պետք է սպասարկի տվյալ ուղեգիծը երկկողմանիորեն, որպեսզի պահպանվի 15րոպե միջակայքով մեկնման ժամանակացույցը:

20. Ա կետի կոորդինատներն են հս.լ. 61°; արլ. ե. 40°, իսկ տեղական ժամանակն է 15:38: Արևելյան ո՞ր երկայնության վրա է Բ կետը, եթե նույն պահին այնտեղ տեղական ժամանակը 15:14 է:

Առարկայական հանձնաժողովի նախագահ՝

Վարդան Ասատրյան